Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով ՀՀ ԱՆ Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն ՓԲԸ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

24.09.2019թ.
ժամը 09:45

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Ռ. Ադամյան
Աշ. Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 02.09.2019թ.

ա) հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղեկցող գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացնել հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը և էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը որոնք սահմանված ժամկետում (04.09.2019թ. դրությամբ) ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի 18.09.2019թ. նիստին արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա) Առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերում բացակայում են՝

1. Ճարտարապետի մասով՝ ճարտարապետական ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու բարձրագույն դասի <Ա> ենթադասի արտոնագիրը կամ գործողության մեջ գտնվող <Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն> լիցենզիայի <Բնակելի, հասարակական և արտադրական> ներդիրը (մասնագետի անվան առկայությամբ),

2. Ճարտարագետ-շինարարի մասով՝ Ճարտարագետ-կոնստրուկտորի ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու բարձրագույն դասի <Ա> ենթադասի արտոնագիրը կամ գործողության մեջ գտնվող <Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն> լիցենզիայի <Բնակելի, հասարակական և արտադրական> ներդիրը (մասնագետի անվան առկայությամբ),

3. Գեոդեզիստի մասով՝ քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի), հողաշինարարի որակավորման համար ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված վկայականը:

բ) Ներկայացված Ավան վարչական շրջանի Ծարավ Աղբյուր փողոցում <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ ուսումնական-սպորտային համալիրի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման համար 01.07.2015թ. կնքված N ԵՆ-ԱվանՈՒՍՀ-15/01 պայմանագրի մասով բացակայում են նախագծանախահաշվային փաստաթղթերի դրական փորձաքննության վերաբերյալ հավաստող փաստաթղթերը:

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 18.09.2019թ. ծանուցվել է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ սահմանված ժամկետում (19.09.2019թ. դրությամբ) արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ և 36-րդ հոդվածի 1-ին կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Ռ. Ադամյան

---------- Աշ. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան